ինչպես գրված է «Պատմության» նշված հատվածում, «զօրքն Հայոց պինդ կացին, հարին և վանեցին զօսմանցին, և իբրև փախստականս արարին, և ապա պնդեցան զկնի խանիցն (մինչդեռ փախստեայ երթային նոքա ի Թավրէզ), հասին նոցա և դարձուցին զամենայն զօրս նոցա, և բերին ի յԱգուլէս. բայց երկու խանքն փախեան»[31]։

«Պատմության» հետագա շարադրանքից կարելի է վստահորեն եզրակացնել, որ խաների փախուստով էլ ավարտվում է շահի հրահանգով օգնության եկած իրանական ուժերի «մասնակցությունը» օսմանցիների դեմ մղված կռիվներին[32]։ Դրանով հանդերձ հայ մարտիկները միայնակ ոչ միայն կարողացան պարտության մատնել հակառակորդին, այլև հետապնդել և պատուհասել փախչող խաներին։

Ձեռք բերած ռազմական հաջողությունների զարգացմանը, սակայն, խանգարում էր ոչ թե խաների դասալքումը, այլ լրջորեն խոչընդոտում էր դասակարգային հակադիր ձգտումներից մղված և օսմանցիների խորամանկ խոստումներից խաբված, Ագուլիսի մեծահարուստ առևտրական դասի ներկայացուցիչների նենգավոր դիրքորոշումը, որոնք եթե նախապես «ծածկապէս դաշնադիր էին ընդ օսմանցոց», ապա, ինչպես կարդում ենք «Պատմության» համապատասխան հատվածում, «յետ այսորիկ իբրև երկու աւուրք ի վերայ անցին, արքն Ագուլէսի և մելիք Մուսին զդաւաճանութիւնս իւրեանց յայտ արարեալ, գրոհ տուին ի մէջ քաղաքին և արձակել սկսան ի վերայ զօրացն Դաւթի թօփս։ Իսկ նոցա խնայեալ ի նոսա (վասն զի ամենայն քաղաքացիքն էին հայ, և ոչ ոք այլազգի գոյր անդ)»[33]։

Համապատասխան բնագրում վերաշարադրելով այս դեպքերը, Ղ. Ստեփանոսյանը ավելի է շեշտում եղբայրասպան կռվից Դավիթ-բեկի խուսափելու հանգամանքը, ավելի մանրամասն բացատրելով, որ «սոքա խնայեցին ի նոսա, վասն զոլոյն համազգային, և զի ոչ կամէին մատանել յարիւն այնքան քրիստոնէից. վասն զի ի քաղաքի անդ էին աւելի քան զտասն հազար տուն հայոց»[34]։

Այս խռովահույզ իրադարձությունների գլխավոր կազմակերպիչը Ագուլիսի քալանթար մելիք Մուսին էր, որի նենգ մտադրությունները նախապես կռահելով, Դավիթ-բեկը սկզբում կարգադրել էր գլխատել նրան, սակայն անսալով իր զինակից մելիք Փարսադանի միջնորդությանը, հրաժարվել էր այդ մտքից։ Իսկ երբ նրան ենթակա Ագուլիսի զինված ջոկատները բացահայտ թշնամական դիրք գրավելով սկսեցին գնդակոծել Թովմա Առաքյալի վանքը, ուր իր զինվորներով ամրացել էր Դավիթ-բեկը, և վերջինս հաշտության նպատակով մելիք Փարսադանին ուղարկեց բանակցելու, մելիք Մուսիի մարդիկ սպանեցին նրան[35]։

Այս պարագաներում էր, որ Դավիթը որոշեց, առանց արյունահեղության, իր զորքերը դուրս բերել թշնամու հետ համագործակցող հայրենակիցների ծուղակից և գնալ ամրապնդելու Ղափանի հայության միասնությունը, որի մեջ նույնպես, օսմանյան իշխանությունների ռազմական ճնշման հետ զուգորդված դավադրությունների հետևանքով, մերթընդմերթ ճեղքվածքներ էին առաջանում։

Շուտով անհրաժեշտ եղավ վճռական քայլերի դիմել՝ կանխելու համար Ջավնդուրի զինվորության պարագլուխների ենթարկումը օսմանյան իշխանություններին։ Տեր-Ավետիսի գլխավորությամբ Հալիձորից ուղարկված զինվորները, ձերբակալելով խռովարարներին, օսմանցի կառավարչի հետ միասին տարան Հալիձոր, որտեղ նրանք հնազանդության երդում տվին Դավիթ-բեկին։

---

31 Նույն տեղում, էջ 140—141։

32 Նույն տեղում, էջ 141—142։

33 Նույն տեղում, էջ 141։

34 Նույն տեղում, էջ 176։

35 Նույն տեղում։